ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/3-1

«12» 07 2018թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Այ Սերվիս>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Մանվելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում

է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 624700 (վեց հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<<Այ Սերվիս>> ՍՊԸ
ք. Երևան, Կառավարական տուն 2	ք. Երևան, Հ.Հակոբյան3/14
ՀՀ ՖՆ աշխատակազմի	Բանկ«Ինեկոբանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 2050022367711001
Հ/Հ 900011018562	ՀՎՀՀ 00124361
Հ/Հ 900011182012 /ԲՈՀ/	
ՀՎՀՀ 02512868	
ՀՎՀՀ 00005982 /ԲՈՀ/	
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
_____ Ն. Հարությունյան	_____ Հ. Մանվելյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

12 07 Հավելված 1
<< >> << >> 2018թ կնքված
N ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/3-1 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկա է հանդիսանում համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունը /այսուհետ՝ Ծառայություն/

***Պարտադիր պայման** է հանդիսանում Ծառայության մատուցման ընթացքում փոխարինվող մասերի նոր՝ չօգտագործված լինելը: Ծառայության մատուցման ընթացքում նորոգվող սարքավորումների, ինչպես նաև պահեստամասերի տեղախոխումը իրականացվում է Կատարողի կողմից:*

հազար դրամ

Չափաբաժին	Ծառայության անվանումը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիր	Չափման միավորը	Ենթակա է գնման 2018թ. ընթացքում՝ ըստ պահանջի /անհրաժեշտության/	
					Քանակը	Ընդամենը՝ ոչ ավել քան
	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ, այդ թվում.					**624,70**
1	Քարթրիջի լիցքավորում	50311120/6	**1. Նախատեսվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության** Canon LBP 3000, HP LJPRO M 1536 DNF MEP, HP LJ 1005, HP LJ 1006, Canon i-SENSYS MF4410, MFC Canon MF 4010, HP LaserJet 1000, HP LaserJet 1010, HP LJ 1020, HP LaserJet 1100, Canon MF 3110, HP LJ Pro 400 MFP, Canon LBP 810, Canon i-SENSYS MF3220, Canon i-SENSIS LBP 6300DN տպիչների պահպանման և վերանորոգման համար՝ լիցքավորում ոչ պակաս քան 611 անգամ՝ ըստ պահանջի, Լիցքավորվող տոների զանգվածը ըստ համապատասխան մոդելներ՝ ոչ պակաս քան 80-150 գրամ, տպաքանակը՝ 1500-2500 էջ, էջի լցվացության՝ 5% դեպքում: **2. Նախատեսվում է Բարձրագույն Որակավորման Հանձնաժողովի** HP LJPRO M 1536 DNF MEP, HP LJ 1005, HP LJ 1006, Canon i-SENSYS MF4410, HP LJ 1020, HP LaserJet 1100, HP LJ Pro 400 MFP, Canon LBP 810, Canon i-SENSYS MF3220, XEROX PHASER 3100 MFP, Toshiba e.studio-222cp.տպիչների պահպանման և վերանորոգման համար՝ լիցքավորում ոչ պակաս քան 38 անգամ՝ ըստ պահանջի, Լիցքավորվող տոների զանգվածը ըստ համապատասխան մոդելներ՝ ոչ պակաս քան 80-150 գրամ, տպաքանակը՝ 1500-2500 էջ, էջի լցվացության՝ 5% դեպքում:	դրամ	1	**584,10**

3	Թղթի մատուցման գլանի փոխարինում	50311120/2	**Նախատեսվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության** Canon LBP 3000, HP LJPRO M 1536 DNF MEP, HP LJ 1005, HP LJ 1006, Canon i-SENSYS MF4410, MFC Canon MF 4010, HP LaserJet 1000, HP LaserJet 1010, HP LJ 1020, HP LaserJet 1100, Canon MF 3110, HP LJ Pro 400 MFP, Canon LBP 810, Canon i-SENSYS MF3220, Canon i-SENSIS LBP 6300DN տպիչների պահպանման և վերանորոգման համար, փոխարինում ոչ պակաս քան 2 անգամ՝ ըստ պահանջի: Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 30000 էջ տպաքանակ	դրամ	1	**4,80**
4	Թղթի բաժանման հանգույցի փոխարինում	50311120/8	**Նախատեսվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության** Canon LBP 3000, HP LJPRO M 1536 DNF MEP, HP LJ 1005, HP LJ 1006, Canon i-SENSYS MF4410, MFC Canon MF 4010, HP LaserJet 1000, HP LaserJet 1010, HP LJ 1020, HP LaserJet 1100, Canon MF 3110, HP LJ Pro 400 MFP, Canon LBP 810, Canon i-SENSYS MF3220, Canon i-SENSIS LBP 6300DN տպիչների պահպանման և վերանորոգման համար, փոխարինում ոչ պակաս քան 5 անգամ՝ ըստ պահանջի: Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 30000 էջ տպաքանակ	դրամ	1	**12,00**
5	Լուսային թմբուկի փոխարինում	50311120/5	**Նախատեսվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության** Canon LBP 3000, HP LJPRO M 1536 DNF MEP, HP LJ 1005, HP LJ 1006, Canon i-SENSYS MF4410, MFC Canon MF 4010, HP LaserJet 1000, HP LaserJet 1010, HP LJ 1020, HP LaserJet 1100, Canon MF 3110, HP LJ Pro 400 MFP, Canon LBP 810, Canon i-SENSYS MF3220, Canon i-SENSIS LBP 6300DN տպիչների պահպանման և վերանորոգման համար, փոխարինում ոչ պակաս քան 10 անգամ՝ ըստ պահանջի: Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 8000 էջ տպաքանակ	դրամ	1	**14,00**
6	Դոզատորի փոխարինում	50311120/7	**Նախատեսվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության** Canon LBP 3000, HP LJPRO M 1536 DNF MEP, HP LJ 1005, HP LJ 1006, Canon i-SENSYS MF4410, MFC Canon MF 4010, HP LaserJet 1000, HP LaserJet 1010, HP LJ 1020, HP LaserJet 1100, Canon MF 3110, HP LJ Pro 400 MFP, Canon LBP 810, Canon i-SENSYS MF3220, Canon i-SENSIS LBP 6300DN տպիչների պահպանման և վերանորոգման համար, փոխարինում ոչ պակաս քան 5 անգամ՝ ըստ պահանջի: Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 15000 էջ տպաքանակ	դրամ	1	**4,00**
7	Կարատրոնի փոխարինում	50311120/3	**Նախատեսվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության** Canon LBP 3000, HP LJPRO M 1536 DNF MEP, HP LJ 1005, HP LJ 1006, Canon i-SENSYS MF4410, MFC Canon MF 4010, HP LaserJet 1000, HP LaserJet 1010, HP LJ 1020, HP LaserJet 1100, Canon MF 3110, HP LJ Pro 400 MFP, Canon LBP 810, Canon i-SENSYS MF3220, Canon i-SENSIS LBP 6300DN տպիչների պահպանման և վերանորոգման համար, փոխարինում ոչ պակաս քան 2 անգամ՝ ըստ պահանջի: Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 15000 էջ տպաքանակ	դրամ	1	**1,80**

8	Մաքրող դանակի փոխարինում	50311120/10	**Նախատեսվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության** Canon LBP 3000, HP LJPRO M 1536 DNF MEP, HP LJ 1005, HP LJ 1006, Canon i-SENSYS MF4410, MFC Canon MF 4010, HP LaserJet 1000, HP LaserJet 1010, HP LJ 1020, HP LaserJet 1100, Canon MF 3110, HP LJ Pro 400 MFP, Canon LBP 810, Canon i-SENSYS MF3220, Canon i-SENSIS LBP 6300DN տպիչների պահպանման և վերանորոգման համար, փոխարինում ոչ պակաս քան 5 անգամ՝ ըստ պահանջի: Փոխարինված սահեցամասը պետք է սահեցվի 15000 էջ տպագրության	դրամ	1	**4,00**

***Ծանոթություն. 1. Ծառայությունը մատուցվում ՀՀ 2018թ.-ի պետական բյուջեով տվյալ նպատակի համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակում, ըստ պահանջի, պահանջի առաջացման պահց սկսած 2 աշխատանքային օրվա ընթացքում; համաձայն կից հավելված 1.1 միավորի գների: Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:**

Պատվիրատու

Ն. Հարությունյան

Կատարող

Հ. Մանվելյան

12.07 **Հավելված 1.1**
<<>> <<>> 2018թ կնքված
N ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/3-1 գնման պայմանագրի

Չափաբաժին	*Ծառայության անվանումը*	*Տեխնիկական բնութագիր*	*Միավորի գինը, հազ.դրամ*
	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ, այդ թվում.		
1	Քարթրիջի լիցքավորում	**1. Նախատեսվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության** Canon LBP 3000, HP LJPRO M 1536 DNF MEP, HP LJ 1005, HP LJ 1006, Canon i-SENSYS MF4410, MFC Canon MF 4010, HP LaserJet 1000, HP LaserJet 1010, HP LJ 1020, HP LaserJet 1100, Canon MF 3110, HP LJ Pro 400 MFP, Canon LBP 810, Canon i-SENSYS MF3220, Canon i-SENSIS LBP 6300DN տպիչների պահպանման և վերանորոգման համար՝ լիցքավորում ոչ պակաս քան 611 անգամ՝ ըստ պահանջի, Լիցքավորվող տոների զանգվածը ըստ համապատասխան մոդելներ՝ ոչ պակաս քան 80-150 գրամ, տպաքանակը՝ 1500-2500 էջ, Էջի լցվացության՝ 5% դեպքում: **2. Նախատեսվում է Բարձրագույն Որակավորման Հանձնաժողովի** HP LJPRO M 1536 DNF MEP, HP LJ 1005, HP LJ 1006, Canon i-SENSYS MF4410, HP LJ 1020, HP LaserJet 1100, HP LJ Pro 400 MFP, Canon LBP 810, Canon i-SENSYS MF3220, XEROX PHASER 3100 MFP, Toshiba e.studio-222cp.տպիչների պահպանման և վերանորոգման համար՝ լիցքավորում ոչ պակաս քան 38 անգամ՝ ըստ պահանջի, Լիցքավորվող տոների զանգվածը ըստ համապատասխան մոդելներ՝ ոչ պակաս քան 80-150 գրամ, տպաքանակը՝ 1500-2500 էջ, Էջի լցվացության՝ 5% դեպքում:	**0,90**
3	Թղթի մատուցման գլանի փոխարինում	**Նախատեսվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության** Canon LBP 3000, HP LJPRO M 1536 DNF MEP, HP LJ 1005, HP LJ 1006, Canon i-SENSYS MF4410, MFC Canon MF 4010, HP LaserJet 1000, HP LaserJet 1010, HP LJ 1020, HP LaserJet 1100, Canon MF 3110, HP LJ Pro 400 MFP, Canon LBP 810, Canon i-SENSYS MF3220, Canon i-SENSIS LBP 6300DN տպիչների պահպանման և վերանորոգման համար, փոխարինում ոչ պակաս քան 2 անգամ՝ ըստ պահանջի: Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 30000 էջ տպաքանակ	**2,40**
4	Թղթի բաժանման հանգույցի փոխարինում	**Նախատեսվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության** Canon LBP 3000, HP LJPRO M 1536 DNF MEP, HP LJ 1005, HP LJ 1006, Canon i-SENSYS MF4410, MFC Canon MF 4010, HP LaserJet 1000, HP LaserJet 1010, HP LJ 1020, HP LaserJet 1100, Canon MF 3110, HP LJ Pro 400 MFP, Canon LBP 810, Canon i-SENSYS MF3220, Canon i-SENSIS LBP 6300DN տպիչների պահպանման և վերանորոգման համար, փոխարինում ոչ պակաս քան 5 անգամ՝ ըստ պահանջի: Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 30000 էջ տպաքանակ	**2,40**

5	Լուսային թմբուկի փոխարինում	**Նախատեսվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության** Canon LBP 3000, HP LJPRO M 1536 DNF MEP, HP LJ 1005, HP LJ 1006, Canon i-SENSYS MF4410, MFC Canon MF 4010, HP LaserJet 1000, HP LaserJet 1010, HP LJ 1020, HP LaserJet 1100, Canon MF 3110, HP LJ Pro 400 MFP, Canon LBP 810, Canon i-SENSYS MF3220, Canon i-SENSIS LBP 6300DN տպիչների պահպանման և վերանորոգման համար, փոխարինում ոչ պակաս քան 10 անգամ՝ ըստ պահանջի: Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 8000 էջ տպաքանակ	**1,40**
6	Դոզատորի փոխարինում	**Նախատեսվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության** Canon LBP 3000, HP LJPRO M 1536 DNF MEP, HP LJ 1005, HP LJ 1006, Canon i-SENSYS MF4410, MFC Canon MF 4010, HP LaserJet 1000, HP LaserJet 1010, HP LJ 1020, HP LaserJet 1100, Canon MF 3110, HP LJ Pro 400 MFP, Canon LBP 810, Canon i-SENSYS MF3220, Canon i-SENSIS LBP 6300DN տպիչների պահպանման և վերանորոգման համար, փոխարինում ոչ պակաս քան 5 անգամ՝ ըստ պահանջի: Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 15000 էջ տպաքանակ	**0,80**
7	Կարատրոնի փոխարինում	**Նախատեսվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության** Canon LBP 3000, HP LJPRO M 1536 DNF MEP, HP LJ 1005, HP LJ 1006, Canon i-SENSYS MF4410, MFC Canon MF 4010, HP LaserJet 1000, HP LaserJet 1010, HP LJ 1020, HP LaserJet 1100, Canon MF 3110, HP LJ Pro 400 MFP, Canon LBP 810, Canon i-SENSYS MF3220, Canon i-SENSIS LBP 6300DN տպիչների պահպանման և վերանորոգման համար, փոխարինում ոչ պակաս քան 2 անգամ՝ ըստ պահանջի: Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 15000 էջ տպաքանակ	**0,90**
8	Մաքրող դանակի փոխարինում	**Նախատեսվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության** Canon LBP 3000, HP LJPRO M 1536 DNF MEP, HP LJ 1005, HP LJ 1006, Canon i-SENSYS MF4410, MFC Canon MF 4010, HP LaserJet 1000, HP LaserJet 1010, HP LJ 1020, HP LaserJet 1100, Canon MF 3110, HP LJ Pro 400 MFP, Canon LBP 810, Canon i-SENSYS MF3220, Canon i-SENSIS LBP 6300DN տպիչների պահպանման և վերանորոգման համար, փոխարինում ոչ պակաս քան 5 անգամ՝ ըստ պահանջի: Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 15000 էջ տպաքանակ	**0,80**

Պատվիրատու

_____/Ն. Հարությունյան

Կատարող

_____/Հ. Մանվելյան

12.07 Հավելված 2
«» «» 2018թ կնքված
N ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/3-1 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ.դրամ

Չափաբաժին	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքի անվանումը	Ծրագրի անվանումը	Ծրագրի հաշվեհամար	Հոդված	Ենթակա է վճարման ՀՀ 2018 թվականի բյուջեից					
								տարի			Ընդամենը
						օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր /մինչև 20-ը/	
1	50311120/6	Քարթրիջի լիցքավորում այդ թվում՝	09,08,01,01 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ծրագիր	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011018562	4232	120.0	220.0	350.0	500.0	549.880	549.880
			09,08,01,01 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ծրագիր-ՀՀ ԿԳՆ ԲՈՀ	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011182012	4232	19.0	23.0	34.22	34.22	34.22	34.22
3	50311120/2	Թղթի մատուցման գլանի փոխարինում	09,08,01,01 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ծրագիր	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011018562	4232	4.8	4.8	4.8	4.8	4.8	4.8
4	50311120/8	Թղթի բաժանման հանգույցի փոխարինում	09,08,01,01 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ծրագիր	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011018562	4232	12.0	12.0	12.0	12.0	12.0	12.0
5	50311120/5	Լուսային թմբուկի փոխարինում	09,08,01,01 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ծրագիր	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011018562	4232	14.0	14.0	14.0	14.0	14.0	14.0

6	50311120/7	**Դոզատորի փոխարինում**	09,08,01,01 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ծրագիր	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011018562	**4232**	**4.0**	**4.0**	**4.0**	**4.0**	**4.0**	**4.0**
7	50311120/3	**Կարատրոնի փոխարինում**	09,08,01,01 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ծրագիր	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011018562	**4232**	**1.8**	**1.8**	**1.8**	**1.8**	**1.8**	**1.8**
8	50311120/10	**Մաքրող դանակի փոխարինում**	09,08,01,01 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ծրագիր	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011018562	**4232**	**4.0**	**4.0**	**4.0**	**4.0**	**4.0**	**4.0**

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

Պատվիրատու

Ն. Հարությունյան

Կատարող

Հ. Մանվելյան